ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՒՐԲԵԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՋԱԼԻԿՈՅԻ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ – ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ /1860-1894 թթ./

Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Խառատյան Ա.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Կոստանդյան Է.Ա.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հովհաննիսյան Էդ. Գ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. հուլիսի 12-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. հունիսի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան Թուրքիայում ընթացող հասարակական վերափոխումների համատեքստում արևմտահայության համար հրատապ դարձավ ազգային մարմիններ ձևավորելու և դրանց իրավական կարգավիճակ տալու հարցը: Խոսքն առաջին հերթին Ազգային սահմանադրության և դրա արդյունքը հանդիսացող ազգային վարչության մասին է: Հայ իրականության մեջ առաջին անգամ էր, որ գումարվում էր յուրովի խորհրդարան հանդիսացող, արևմտահայ համայնքի ազգային գործերով ու ներքին խնդիրներով զբաղվող Ազգային ժողովը՝ իր ընտրված երեսփոխաններով:

Ազգային սահմանադրությունը շոշափելի հետք է թողել հայ հասարակական-քաղաքական մտքի, ազգային ինքնագիտակցության բարձրացման ու ժողովրդավարական-խորհրդարանական գաղափարների արմատավորման գործում: Ազգային սահմանադրության շնորհիվ արևմտահայ իրականություն էր մուտք գործում մի նոր ազգային-վարչական կառույց, որտեղ, թեև մեծ զգուշավորությամբ, բարձրացվում էին հայությանը հուզող կենսական հարցեր: Այլ բան էր, թե որքանով էր ազգային իշխանություններին հաջողվում կենսագործել դրանք:

Արևմտահայ Ազգային ժողովի գործունեության գնահատումը մեր պատմագրության կարևորագույն խնդիրներից մեկն է: Այդ հիմնախնդրին խորհրդահայ պատմագրության կողմից հպանցիկ անդրադարձներ են եղել քննարկվող ժամանակաշրջանի հայ հոգևոր, հասարակական-քաղաքական, մշակութային գործիչների գործունեության համատեքստում, սակայն, հիմնականում այդ կարևոր ազգային կառույցի դերն ու նշանակությունը մեր ժողովրդի պատմության մեջ թերագնահատելու միտումով:

Արևմտահայ Ազգային ժողովի գործունեության ուսումնասիրությունն ու վերլուծությունն ունի կարևոր պատմաքաղաքական նշանակություն Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության, ազգային գաղափարախոսության, մեզանում խորհրդարանական սկզբունքների տարածման գործում: Ուսումնասիրությունը կարևորագույն քայլ է նաև մեր ժողովրդին իր պատմության ստվերված էջերը ներկայացնելու առումով: Այն նպատակ ունի բացահայտել XIX դարի երկրորդ կեսին արևմտահայ Ազգային ժողովի գործունեության հիմնական ուղղություններն ու նպատակները, վերանայել և հնարավորինս հերքել բոլոր այն, մեր կարծիքով ոչ ճիշտ մոտեցումները, որոնք Ազգային ժողովի գործունեությունը համարել են աննպատակ և թերագնահատել են դրա դերն ազգային ինքնագիտակցության բարձրացման գործընթացում:

<u>ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.</u> Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է արևմտահայերի ազգային-վարչական կացության և դրա հետ սերտորեն առնչվող Ազգային ժողովի գործունեության համակողմանի լուսաբանման անհրաժեշտությամբ: Անդրադառնալով արևմտահայության կյանքի այդ կարևորագույն ժամանակաշրջանի վերլուծությանը, մեր առջև դրել ենք հետևյալ հիմնական խնդիրները.

Առաջին. Համակողմանիորեն վերլուծել Ազգային սահմանադրության ընդունման պատճառները:

Երկրորդ. Բացահայտել սահմանադրության շրջանում Կ.Պոլսի պատրիարքների դերակատարությունը հայ հասարակական կյանքում:

Երրորդ. Քննարկվող ժամանակաշրջանի քաղաքական և ազգային զարգացումների հրամայականների համատեքստում բնութագրել Ազգային ժողովում բարձրացված խնդիրների վերաբերյալ քննարկումներն ու կայացրած որոշումները, մասնավորապես.
ա) Երուսաղեմի միաբանության պարտքերի վճարման համալիր միջոցառումների մշակում:
բ) Սսի և Աղթամարի կաթողիկոսությունների շուրջ ծավալված կաթողիկոսական իշխանության համար պայքարի հանգուցալուծում:
գ) Էջմիածնի կաթողիկոսության հետ Կ.Պոլսի պատրիարքության հարաբերությունների արժեվորում:
դ) Գավառական հարստահարությունների շուրջ թուրքական իշխանությունների հետ բանակցային գործընթացի վերհանում:
ե)1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Հայկական հարցի ուղղությամբ կատարված ձեռնարկումների վերլուծություն:
զ) Կրթության և դաստիարակության ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումների հետազոտություն:
Չորրորդ. Ազգային ժողովի նիստերի, վարչական մարմինների գործունականությանը և արդյունավետությանը խոչընդոտող գործոնների բացահայտում:
<u>ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.</u> Ատենախոսության մեթոդաբանական հիմքը Ազգային սահմանադրության ընդունմանը նախորդող՝ Օսմանյան Թուրքիայում արևմտահայերի սոցիալական ու իրավական կացության բացահայտումն է՝ քննական-վերլուծական մեթոդով: Ատենախոսության հանգուցային հիմնահարցերի՝ ազգային-վարչական մարմինների օրակարգում բարձրացված հիմնախնդիրների գնահատման դեպքում կիրառվել է վավերագրերի և փաստերի համեմատական ու համադրական վերլուծական մեթոդը:
<u>ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.</u> Ատենախոսության բուն շարադրանքն ընդգրկում է 19-րդ դարի 60-90-ական թվականների արևմտահայ հոգևոր, հասարակական, քաղաքական ու դիվանագիտական գործընթացներն ու իրավական ամրագրումներն ընդգրկող ժամանակաշրջանը: Միաժամանակ, մեր կողմից հետազոտվող հիմնահարցերի սկզբնավորման պատմաքաղաքական ակունքների մասին ավելի հստակ ու ամբողջական պատկերացում կազմելու համար, նպատակահարմար ենք գտել անդրադառնալ նաև 19-րդ դարի 20-30-ական թվականներին տեղի ունեցած այն քաղաքական իրադարձություններին, սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական պայմաններին, որոնք հանգեցրին Ազգային սահմանադրության ընդունմանը և վարչական մարմինների ձևավորմանը:
<u>ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.</u> Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունն ընտրել է հանրապետական կառավարման ժողովրդավարական համակարգ, այստեղից էլ հասկանալի է դառնում, թե որքան հրատապ է ընդհանրապես խորհրդարանների և մասնավորապես արևմտահայ ազգային-վարչական կառույցների գործունեության բազմակողմանի ուսումնասիրումը, որն անկասկած, կարող է օգտակար և ուսանելի լինել ներկայիս Հայաստանի Հանրապետության պետահրավական կառույցների կայացման գործընթացում: Այս նկատառումով հարկ է վերահաստավորել խորհրդարանականության յուրօրինակ սկզբունքներ բովանդակող հայեցակարգերը:

Ատենախոսության մեջ առաջին անգամ ուսումնասիրության առարկա է դարձել Ազգային ժողովի և նրա վարչական մարմինների գործունեությունը: Արևմտահայերի Ազգային սահմանադրության համատեքստում տրված է Օսմանյան

կայսրությունում հույների և հրեաների Ազգային կանոնադրությունների համառոտ վերլուծությունը:

Որպես գիտական նորույթ, ատենախոսության մեջ արված ընդհանրացումներն ու եզրահանգումներն ունեն գիտագործնական նշանակություն՝ մեր հանրապետության ազգային օրենսդրության, ազգային գաղափարախոսության, մեզանում խորհրդարանականության կայացման և իրավագիտակցության ձևավորման գործում: Աշխատության մեջ օգտագործված փաստական նյութերը և տեսական եզրակացությունները կարելի է օգտագործել ոչ միայն XIX դարի երկրորդ կեսի հայոց պատմության բարդ ու հակասական ժամանակաշրջանի նորովի շարադրման ու ամբողջացման նպատակով, այլև ուսումնակրթական համակարգում: Աշխատությունը օգտակար կարող է լինել ներկային՝ Հայաստանի Հանրապետություն – սփյուռք հոգևոր-մշակութային աղերսների ամրապնդման և խորացման տեսակետից: Այն գործնական կիրառում կարող է ունենալ պատմության, իրավաբանական, քաղաքագիտության ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև Ազգային ժողովի պատգամավորների շրջաններում:

<u>ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ և ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.</u> Արևմտահայերի ազգային-վարչական կացությունը քննարկվող ժամանակաշրջանում հետազոտված է ոչ բավարար չափով: Հայ գիտնականները՝ պատմաբաններ, փիլիսոփաներ, իրավաբաններ, քաղաքագետներ հպանցիկ անդրադարձել են արևմտահայ Ազգային ժողովի գործունեությանը Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական կացության, ազգային-ազատագրական շարժումների կամ հայ իրավաքաղաքական մտքի պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Աշխատության աղբյուրագիտական հենքն են ՀՀ արխիվներում պահվող փաստաթղթերն ու վավերագրերը, որոնք նպաստում են լուսաբանելու մի շարք կարևոր խնդիրներ: Այդպիսիք են Հայաստանի ազգային արխիվի[1], Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի[2], Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀԻ-ի (Մատենադարան)[3] ձեռագիր և տպագիր նյութերը:

Ատենախոսության շարադրման համար սկզբնաղբյուր են հանդիսացել Ազգային ժողովի ատենագրությունները[4], տեղեկագրերը[5], կանոնադրությունները[6],

---

[1] Հայաստանի Ազգային Արխիվ, Լ.Ռ. Թութունջյանի ֆոնդ, ցուցակ 1, գործ 829, թ. 413, Ամենայն հայոց կաթողիկոսների դիվանի ֆոնդ, g. 2, գ. 30, թ. 213, Էջմիածնի Ս.Լուսավորչական Սինոդի ֆոնդ, g. 4, գ. 24, թ. 25-26:

[2] Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Հ.Առաքելյանի ֆոնդ, գ. 182, էջ 39, 49; Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին IV, գ. 45, բաժին XII, գ. 4593; Գ. Աղանյանի ֆոնդ, գ. 176, էջ 23; Գր. Արծրունու ֆ., գ. 27:

[3] Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀԻ (Մատենադարան), Կաթողիկոսական դիվան, ցուց. 15, թղթ. 193, վավ. 146; թղթ. 262, վավ. 67; թղթ. 230, վավ. 228, 231, 236; թ. 235, վավ. 82: Իզմիրլյանի ֆոնդ, թղթ. 12, վավ. 308; թղթ. 10, վավ. 74:

[4] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ (1860-1870 թթ.), Կ.Պոլիս, տպ. Սարեան, 1890, 435 էջ; (1870-1874 թթ.), Կ.Պոլիս, 1870, 1016 էջ; (1874-1876 թթ.), Կ.Պոլիս, տպ. Յ.Միւհէնտիսեան 1874, 535 էջ; (1876-1877 թթ.), Կ.Պոլիս, 1876, 518 էջ; (1878-1880 թթ.), Կ.Պոլիս, 1878, 518 էջ; (1880-1881 թթ.), Կ.Պոլիս, տպագրություն Արամեան, 1880, 610 էջ; (1881-1883 թթ.), Կ.Պոլիս, 1881, 409 էջ; (1883-1884 թթ.), Կ.Պոլիս, 1883, 612 էջ; (1884-1886 թթ.), Կ.Պոլիս, 1884, 479 էջ; (1886-1888 թթ.), Կ.Պոլիս, 1886, 316 էջ; (1888-1890 թթ.), Կ.Պոլիս, 1888, 344 էջ; (1890-1896 թթ.), Կ.Պոլիս, 1890, 152 էջ:

[5] Տեղեկագիր գավառական հարստահարութեանց, Կ.Պոլիս, տպ. Արամեան, 1876, 44 էջ:

հրահանգները[7], 1860[8] և 1863[9] թվականների Ազգային սահմանադրությունները և այլն, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել քննարկվող հարցերի, դրանց շուրջ ծավալված բանավեճերի և ընդունված որոշումների մասին:

Աղբյուրագիտական ուրույն արժեք ունեն ատենախոսության մեջ օգտագործված հասարակական, քաղաքական և հոգևոր գործիչների հուշերն ու օրագրությունները, որոնք լրացնում են, Օսմանյան կայսրության քաղաքական զարգացումների համատեքստում, Ազգային ժողովի գործունեության վերաբերյալ մեր պատկերացումները:

Իրենց վերլուծական բնույթով առանձնանում են Սարուխանի[10], Բ.Քեչյանի[11], Գ.Գյուզալյանի[12], Ատոմի[13] աշխատությունները, որոնցում ոչ միայն լուսաբանվում են Ազգային ժողովում բարձրացված առանձին խնդիրներ, այլև այն պատճառները, որոնք կաշկանդում էին այդ կարևոր կառույցի գործունեությունը:

Հայ եկեղեցու պատմությանն ու դրա դերին, Ազգային ժողովում երկար տարիներ խնդրո առարկա հանդիսացող Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսությունների, Երուսաղեմի միաբանության շուրջ ծագած խնդիրներին են անդրադարձել Մ.Օրմանյանը[14], Մ.Իզմիրլյանը[15], Տ.Սավալանյանը[16], Բ.Կյուլեսերյանը[17], Գևորգ-Մեսրոբը[18], Հ.Ակինյանը[19], Ա.Երիցյանցը[20]:

XIX դարի առաջին կեսի քաղաքական զարգացումները, Էջմիածնի կաթողիկոսների գործունեությունը և նրանց ընտրության կարգը իրենց արտացոլումն են գտել Ա.Երիցյանցի[21] երկհատոր ուսումնասիրության երկրորդ հատորում: 1836

---

[6] Կանոնադրութիւն Ազգային ժողովին, Կ.Պոլիս, տպ. Գավաֆեան, 1874, 56 էջ: Կանոնադրութիւն ընդհանուր բարեկարգութեան ազգային վարժարանաց, Կ.Պոլիս, տպ. Հովհ.Միհեենտիսեան, 1864, 23 էջ:

[7] Հրահանգ բարեկարգութեան ազգային վարժարանաց, Կ.Պոլիս, տպ. Յ.Միհէնտիսեան, 1873, 24 էջ: Հրահանգ յարաբերութեան առաջնորդաց եւ գավառական վարչութեանց ընդ տեղական կառավարութեան, Կ.Պոլիս, տպ. Միհէնտիսեան, 1873, 9 էջ:

[8] Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, Յազգային տպ. Ս.Փրկիչ, 1860, 43 էջ:

[9] Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, տպ. Յ.Միհէնտիսեան, 1863, 54 էջ:

[10] Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ.Ա, Թիֆլիս, տպ. «Էպոխա», 1912, 480 էջ+105 էջ «Ազգային Սահմանադրութիւն հայոց»:

[11] Քէչեան Բ., Պատմութիւն ս.Փրկչի հիւանդանոցին Հայոց ի Կ.Պոլիս, Կ.Պոլիս, տպ. Գ.Պաղտասարեան, 1887, 287 էջ:

[12] Գիւզալեան Գ., Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը, Փարիզ, տպ Հ.Յ.Դաշնակցութեան, 1927, 156 էջ:

[13] Ատոմ, Ազգային Սահմանադրութիւնը: Գիծեր մեր մշակութային պատմութենէն, Կ.Պոլիս, հրատ. Արծիւ ժողովրդական գրավաճառանոցի, 1914, 164 էջ:

[14] Օրմանեան Մ., Ազգապատում, հ.Գ, Պէյրութ, տպ Սեւան,1961, 5531 սյուն:

[15] Իզմիրլեան Մ., Հայրապետութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ եւ Աղթամար ու Սիս, Կ.Պոլիս, տպ Զարդարեան, 1881, 1288 էջ:

[16] Սավալանեան Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հ.1-2, Երուսաղէմ, տպ. սրբոց Յակոբեանց, 1931, 1387 էջ:

[17] Կիւլէսերեան Բ., Հայ եկեղեցի, Երուսաղէմ, ս.Յակոբեանց տպարան, 1930, 353 էջ:

[18] Գէորգ-Մեսրոպ, Պատմութիւն հայ եկեղեցւոյ, հ.Բ, Կ.Պոլիս, տպ. Օ.Արզուման, 1914, 583 էջ:

[19] Ակինեան Հ., Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիէննա, Մխիթարեան տպարան, 1920, 200 էջ:

[20] Երիցեանց Ա., Տաճկաստանի հայոց իրաւունքները եւ նոցա սահմանադրութիւնը, «Փորձ», Տփխիս, 1876, թիվ 1, էջ 367-393, թիվ 2, էջ 145-182, Տփխիս, 1877, թիվ 3, էջ139-177:

[21] Երիցեանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX-որոդ դարում, մասն Բ, Թիֆլիս, տպ. Մ. Մարտիրոսեանի եւ ընկ., 1895, 592 էջ:

թվականի Հայոց եկեղեցու կանոնադրության («Պոլոժենիե») նրա՝ բազմակողմանի վերլուծությունը մեր կողմից օգտագործվել է Կ.Պոլսի Ազգային ժողովում էջմիածնի կաթողիկոսների թեկնածուների առաջադրման և ընտրակարգին վերաբերող որոշումների պարզաբանման ժամանակ:

Կ.Պոլսի պատրիարքարանի հարաբերությունները էջմիածնի կաթողիկոսության հետ, Գևորգ Դ, Մակար Ա, Մկրտիչ Ա, Մատթեոս Բ կաթողիկոսների ընտրություններին արևմտահայության մասնակցության խնդիրներին է անդրադարձել Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը[22]: Հեղինակը սթափ վերլուծության ենթարկելով Ազգային ժողովում անընդհատ բարձրացվող, կաթողիկոսական ընտրությունների հարցը, քննադատում է տարիներով Ազգային ժողովի նիստերում երեսփոխանների երկարատև ու անպտուղ վիճաբանությունները:

Քննարկվող ժամանակաշրջանի Ազգային ժողովի նախագահ-պատրիարքներ Մ.Խրիմյանի, Ն.Վարժապետյանի, Մ.Իզմիրլյանի գործունեությանն են նվիրված Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի[23], Հ.Երամյանի[24], Յ.Մ.Նշկյանի[25], Ա.Թերզիպաշյանի[26], Հ.Ճանկյուլյանի[27], Ծերենցի[28], Ե.Տեր-Մկրտիչյանի[29], Խ.Մալումյանի[30], Ա.Չոպանյանի[31], Ա.Արփիարյանի[32], Գ.Չիլինկիրյանի[33], Ս.Շահ-Նազարյանցի[34], Ս.Գաբամաճյանի[35], Շիրվանզադեի[36] աշխատությունները, որոնցում արժեվորվում է նրանց դերակատարությունը Կ.Պոլսի հասարակական-քաղաքական, մշակութային և հոգևոր կյանքում:

Արևմտահայերի Ազգային սահմանադրությունն իր գնահատականն է ստացել Լ.Չորմիսյանի աշխատությունում[37]: Հեղինակն այն անվանում էր տրամաբանորեն կառուցված, կատարյալ կանոնադրություն, որը ուղեցույց էր ծառայելու ազգային մարմինների գործառնության համար: Ազգային ժողովի գործունեության

---

[22] Աշճեան Մ., էջեր հայ եկեղեցւոյ պատմութենէն, Երեւան, Բ տպագրութիւն, 1994, 180 էջ:

[23] Թ.Ե.Գ., Խրիմեան Հայրիկ, (իր ծննդեան 170-ամեակին առթիւ), Փարիզ, Գեղարվեստական տպ., 1925, 230 էջ:

[24] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ.Ա, Աղեքսանդրիա, տպ. Ա. Գասպարյան, 1929, 502 էջ:

[25] Նշկեան Յ.Մ., Առաջին կայծերը: Էջ մը Կարնոյ զարթօնքէն, ա.տ, տպ. «Պայքար», 1930, 146 էջ:

[26] Թէրզիպաշեան Ա., Արծիւը իր բոյնին մէջ, Փարիզ, Printed in France, 1938, 246 էջ:

[27] Ճանկիւլեան Յ., Յիշատակներ հայկական ճգնաժամէն, մասն Ա եւ Բ, Կ.Պոլիս, տպ. «Կոհակի», 1913, 155 էջ

[28] Ծերենց, Կաթողիկոսութիւն եւ Խրիմեան, Թիֆլիս, տպ. Մ. Վարանդեան եւ ընկ., 1884, 38 էջ:

[29] Տեր-Մկրտիչեան Ե., Գանձեր Վասպուրականի, հ.1, Պոսթոն, տպ. Պայքար, 1966, 640 էջ:

[30] Մալումեան Խ., Խրիմեան: Կենսագրական տեսութիւն, Թիֆլիս, Կովկասեան գլխ. կառավարչապետի տպ., 1892, 96 էջ:

[31] Չօպանեան Ա., Դեմքեր, Բարիզ, հրատ. Հայ կրթ. հիմնարկ., 1924, 166 էջ:

[32] Արփիարեան Ա., Պատմութիւն ժԹ դարու Թուրքիոյ հայոց գրականութեան, Գահիրէ, տպ Յուսաբեր, 1943, 231 էջ:

[33] Չիլինկիրեան Գ., Ուղեւորութիւն ի Կոստանդնուպօլիս, Զմիւռնիա, տպ. Մ.Մամուրեան, 1883, 239 էջ:

[34] Շահ-Նազարեանց Ս., Վեհափառ Իզմիրլեանը, Մոսկվա, էլեքտրաշարժ տպարան Ե.Աւետիքեան, 1910, 70 էջ:

[35] Գաբամաճեան Ս., Ամենապատիւ Տ.Տ.Մատթէոս Ս. արքեպիսկոպոս Իզմիրլեան: Բարձրաշնորհ Տ.Եղիշէ Ս.եպիսկոպոս Դուրեան, Կ.Պոլիս, տպ. Զ.Ն.Պէրպէրեան, 1908, 40 էջ:

[36] Շիրվանզադե Ա., Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեան, Նոր-Նախիջեւան, հրատ. «Մեր ձայն», 1908, 54 էջ:

[37] Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հատոր Ա, Պէյրութ, 1972, 612 էջ:

անարդյունավետության պատճառը նա համարում էր անընդհատ բարձրացող կազմակերպական հարցերը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ա.Ալպոյաճյանի ուսումնասիրությունը[38], որտեղ տրված են 1860 և 1863 թվականների սահմանադրությունների էական տարբերությունները: Հեղինակը քննադատում է ազգային-վարչական մարմինների գործունեությունը, նշելով, որ դրանք հիմնականում զբաղված էին ընտրությունների անցկացմամբ, քանի որ կարճատև պաշտոնավարությունից հետո անհամաձայնություններով պառակտված՝ կազմալուծվում էին, իսկ հրաժարականները՝ հաջորդում մեկը մյուսին:

Ա.Ալպոյաճյանն Ազգային ժողովի գործունեությունը բաժանում է մի քանի փուլերի. 1860-1870թթ.՝ մանկական երկչոտ քայլերի, 1870-1880թթ.՝ խորհրդարանական «գերագրգռության, խոսք կուզեմի և կբողոքեմի» շրջան, 1880-1891թթ.՝ հասունության շրջան[39]: Հեղինակը հակիրճ անդրադառնում է նաև սահմանադրական շրջանի պատրիարքների գործունեությանը, Ազգային ժողովի գործառնություններին, Կիլիկիայի, Աղթամարի կաթողիկոսությունների և Երուսաղեմի միաբանության շուրջ ծավալված իրադարձություններին:

Քննարկվող ժամանակաշրջանի հայոց պատմությունը վերաիմաստավորելու գործում պետք է առանձնացնել Ռաֆֆու հրապարակախոսությունը[40]: Նա իր հոդվածներում անդրադառնում է արլսահայության հասարակական-քաղաքական կյանքին, ազգային սահմանադրությանը, Մ.Խրիմյանի գործունեությանը, արևմտահայության զինվորագրությանը, գավառական հարստահարություններին և այլ հարցերի: Ռաֆֆին գաղափարական նոր մոտեցում է ցուցաբերում հարստահարությունների բնութագրմանը՝ դրանց մեջ առանձնացնելով հողային հարցը:

Կ.Պոլսի հինգդարյա պատմության կարևորագույն իրադարձություններին է նվիրված Հ.Ճ.Սիրունու աշխատությունը[41]: Սույն աշխատությունը հատկանշվում է թուրքական և օտար աղբյուրների հագեցվածությամբ, հայ ազգային գործիչների, Կ.Պոլսում տեղի ունեցող քաղաքական զարգացումների մասին հեղինակի սթափ գնահատականներով: Աշխատության երրորդ հատորում հեղինակը վերլուծում է Ազգային ժողովի կողմից բարձրացված որոշ խնդիրներ՝ անդրադառնալով այդ կառույցի սկզբնավորման, պատրիարքներ Մ.Խրիմյանի և Ն.Վարժապետյանի գործունեությանը:

Մ.Սերոբյանը[42] Ազգային սահմանադրության ազատամիտ հեղինակներին քննադատում էր արևմտահայ իրականությունից կղզիացած լինելու համար, որոնք անտեսում էին գավառի պահանջները և զբաղված էին բացառապես Պոլսով: Քննադատելով Ն.Վարժապետյան պատրիարքին և արևմտահայ վերնախավին, Ազգային ժողովի գործունեությունը նա համարում էր անհնաստ և երկդիմի, որի հետևանքով նրանք չկարողացան նկատել իրենց դեմ լարված դիվանագիտական ծուղակը և արևմտահայությանն էլ ավելի անելանելի դրության մեջ դրեցին[43]:

---

[38] Ալպաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը ու իր ծագումը եւ կիրառութիւնը: // Ընդարձակ օրացոյց Ս.Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ.Պոլիս, տպ. Յ.Մատթէոսեան, 1910, էջ 76-528:

[39] Տես նույն տեղում, էջ 432:

[40] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ.9, Երևան, Հայպետհրատ, 1958, 543 էջ:

[41] Սիրունի Յ.Ճ., Պոլիս և իր դերը, հ.3, Պէյրութ, տպ. Կաթողիկոսութեան հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1987, 687 էջ:

[42] Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ, տպ. «Նոր աստղ», 1948, 383 էջ:

[43] Տե՛ս նույն տեղում, էջ 136:

Խորհրդահայ պատմագրության կողմից արևմտահայ Ազգային ժողովի գործունեությունը հատուկ ուշադրության առարկա չի դարձել: Անդրադարձները վերաբերում են, որպես կանոն, XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում ծավալված սահմանադրական շարժմանը, Ազգային սահմանադրության ընդունմանը, Մ.Խրիմյանի և Ն.Վարժապետյանի ձեռնարկումներին Հայկական հարցի ուղղությամբ: Խորհրդային տարիներին գրած իր առանձին ուսումնասիրություններում Լեոն[44] բարձր էր գնահատում նշված եկեղեցականների հասարակական-քաղաքական և հոգևոր գործունեությունը: Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը նա համարում էր կարևոր քայլ դեպի առաջադիմություն: Լեոն քննադատում էր Ազգային ժողովի երեսփոխաններին, որոնք զբաղված էին միայն սահմանադրության վերաքննության ու ներքին վարչական հարցերի շուրջ անպտուղ վիճաբանություններով և ոչ մի օգուտ չէին տալիս գավառահայությանը:

Աշ. Հովհաննիսյանի[45] աշխատության մեջ քննարկվում են Մ.Նալբանդյանի առնչությունները արևմտահայ սահմանադրական շարժման գործիչների հետ: Միաժամանակ հեղինակը հանգամանորեն անդրադարձել է սահմանադրական պայքարին ժողովրդի մասնակցությանը՝ տալով սահմանադրության մարքսիստական հիմնավոր գնահատականը: Ակնառվոր գիտնականը սահմանադրությունը քննարկել է զուտ տնտեսական ու հասարակական կտրվածքով և չի անդրադարձել դրա քաղաքական շարժառիթներին: Ազգային սահմանադրությունը հեղինակն անվանում է ազգային-եկեղեցական կանոնադրություն, որը կոչված էր իրավական շրջանակների մեջ դնելու արլսահայ բուրժուազիայի տիրապետությունը:

Մ.Ներսիսյանի[46] աշխատությունը նվիրված է օսմանյան բռնապետության դեմ 1850-1870թթ. ծավալված հայ ազգային-ազատագրական շարժմանը: Հեղինակն անդրադառնալով Ազգային սահմանադրության ընդունմանը, դրան տալիս է կրոնադավանական, մշակութային, կրթական երկրորդական հարցերը կարգավորող կանոնադրական նշանակություն, ինչը չէր կարող կատեցնել արևմտահայության դրության հետագա վատթարացումը:

Ռ.Հովհաննիսյանն[47] իր աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է Սան-Ստեֆանոյի դաշնագրում և Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի բարձրացմանը և այդ համատեքստում Ազգային ժողովի նիստերում երեսփոխանների արտահայտած մտքերին:

Հ.Ղազարյանի[48] մենագրության մեջ համակողմանիորեն լուսաբանված են արևմտահայության պատմության մի շարք առանցքային հարցեր՝ այդ թվում և Ազգային սահմանադրության ընդունման շուրջ ծավալված պայքարը:

Հ.Վարդանյանն[49] Ազգային սահմանադրությունը գնահատում է որպես աչքակապություն, որը գլխավորապես ծառայում էր հայ հարուստների շահերին:

---

[44] Լեո, Երկերի ժողովածու (10 հատորով), հ.6, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, 877 էջ:

[45] Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Երևան, Հայպետհրատ, 1955, 600 էջ:

[46] Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850-1870-ական թթ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, 531 էջ:

[47] Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (19-րդ դարի 70-80-ական թվականներ), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, 388 էջ:

[48] Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967, 669 էջ: Հայ ժողովրդի պատմություն, հ. V, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 273-331:

[49] Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967, 356 էջ:

Անդրադառնալով Ազգային ժողովի կողմից հարստահարությունների տեղեկագրերի ընդունմանը, հեղինակը մատնանշում է, որ հայոց պատրիարքարանը խնամքով գրանցում էր գավառահայերի բողոքները և ներկայացնում թուրքական կառավարությանը և դրանով իր պարտքը ավարտված համարում: Ակնառու է այս հեղինակի զուտ դասակարգային մոտեցումը սահմանադրությանն ու ազգային մարմինների գործունեությանը:

Ա.Համբարյանն[50] անդրադառնալով քննարկվող ժամանակաշրջանի «կղերապահպանողական» հոսանքի ներկայացուցիչների դիրքորոշումներին, վերլուծում է Մ.Օրմանյանի հայացքները՝ անդրադառնալով նրա պատրիարքական գործունեությանը: Մի կողմից մատնանշելով Օրմանյանի ձկուն քաղաքականությունը արևմտահայության գոյապահպանման ուղղությամբ, հեղինակը, մյուս կողմից, թերագնահատում է այդ ձեռնարկումները, հայտնելով, որ դրանք ոչ մեղմեցին և ոչ էլ փոխեցին Համիդի հայահալած քաղաքականությունը[51]:

Է.Կոստանդյանի աշխատությունները[52] նվիրված են XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական, ազգային, հոգևոր գործիչներ Գ.Սրվանձտյանի և Մ.Խրիմյանի գործունեության քննությանը: Հեղինակը լուսաբանել է այս լուսամիտ գործիչների կյանքի և գործունեության շրջափուլերը, բացահայտել նրանց տեղն ու դերը Հայկական հարցի արծարծման գործում: Միաժամանակ անդրադարձ է կատարվել նաև Ազգային ժողովում, Խրիմյանի պատրիարքության ժամանակ, բարձրացված կարևորագույն խնդիրներին: Է.Կոստանդյանը քանիցս արծարծել է Մ.Խրիմյանի և ազգային հետադիմական ուժերի սահմանադրության շուրջ Ազգային ժողովում ունեցած բախումներին՝ ամբողջականորեն բացահայտելով հայրենասեր պատրիարքի ազգանվեր գործունեությունը՝ սահմանադրությանը ժողովրդավարական հուն տալու և Արևմտահայաստանում նույնպես կիրառելու ուղղությամբ: Գ.Սրվանձտյանին՝ և Մ.Խրիմյանին նվիրված իր աշխատություններում Է.Կոստանդյանը խորամուխ է եղել ազգային-վարչական մարմինների աշխատանքն արդյունավորելու նրանց ջանքերի մեջ:

Արևմտահայերի սահմանադրության և վարչական կառույցների նշանակությանն է անդրադարձել Ա.Խառատյանը[53]: Նրա աշխատություններում ցույց է տրվում սահմանադրության հակասականությունը, մի կողմից՝ քաղաքական բովանդակազրկությունը և մյուս կողմից՝ մի որոշ դրական դերը հայ մտավոր ու մշակութային կյանքի զարգացման մեջ: Այս հեղինակը քիչ է շոշափել, սակայն, ազգային-վարչական կառույցների հետ կապվող հիմնահարցերը:

Հետխորհրդային շրջանում, նախկին արժեքների վերաարժեվորման արդյունքում մեծացավ հետաքրքրությունը հատկապես հայ սահմանադրական իրավունքի հուշարձանների նկատմամբ: Ազգային սահմանադրության

---

[50] Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, «Հայաստան», 1990, 479 էջ:

[51] Տե՛ս Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 22:

[52] Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 193 էջ: Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, «Հանգակ-97», 2000, 446 էջ:

[53] Խառատյան Ա., Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 158 էջ: Խառատյան Ա., Արևմտահայերի ազգային «սահմանադրությունը», Պատմա-բանասիրական հանդես, թիվ 2-3, Երևան, 1992, էջ 51-66: Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 2, Երևան, 2008, էջ 81-93:

լուսաբանմանն են անդրադարձել Ռ.Միրումյանը[54], Գ.Գրիգորյանը[55] և ուրիշներ:

Ազգային սահմանադրությունը իրավաքաղաքական մտքի համատեքստում է քննարկել Գ.Գրիգորյանը[56]: Աշխատության մեջ ճիշտ է գնահատվում Ազգային սահմանադրության իրավաքաղաքական նշանակությունը: Հեղինակի կարծիքով Ազգային սահմանադրությունը փորձ էր ամրագրելու սոցիալական արդարության, հավասարության, օրինականության, իրավունքներն ու պարտականությունները փոխադարձորեն հարգելու գաղափարները, որոնք, թեև առաջադիմական էին, սակայն Թուրքիայի տիրապետության պայմաններում անիրականանալի:

Սահմանադրությունը փորձել են գնահատել նաև արտասահմանցի գիտնականները, մասնավորապես բելգիացի իրավաբան Մ.Գ.Ռոլեն-ժեկմենը[57], որի արտահայտած կարծիքն Ազգային սահմանադրության մասին եղել է գրեթե բոլոր հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այս հեղինակն իրավացիորեն նշում է սահմանադրությամբ հայերին ընձեռված բողոքելու իրավունքը, սակայն գրեթե չի անդրադառնում այդ իրավունքի ոտնահարումներին՝ թուրքական պետության կողմից: Քննարկվող հարցին այս կամ այն չափով անդրադարձել են նաև ռուս հեղինակներ Պ.Ա.Չիխաչևը[58], Ն.Ն.Գոլոբորոդկոն[59], Ն.Ա.Դուլինան[60], Ի.Լ.Ֆադեևան[61], Վ.Ի.Շերեմետը[62], Ի.Ե.Ֆադեևան[63] և ուրիշներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթների շուրջ կարդացվել են զեկուցումներ Հայկական պետական ագրարային համալսարանի գիտական նստաշրջաններում և միջազգային գիտաժողովներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված են թեմայի գիտական նորույթն ու արդիականությունը, վերլուծության է ենթարկված աղբյուրագիտական հիմքը, բացահայտված է նրա գիտական մշակվածության աստիճանը, սահմանված են հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽՈՒՄ՝ «ԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՍԱՅՆՔՈՒՄ» բաղկացած է երկու ենթագլուխներից:

---

[54] Միրումյան Ռ., Ազգային սահմանադրականության էության ըմբռնումը հայ լուսավորական պատմափիլիսոփայության մեջ, Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան, Գիտական աշխատություններ: Հասարակական գիտություններ, պրակ 1, Լինգվա, 2002, էջ 5-19:

[55] Գրիգորյան Գ., Ազգային սահմանադրություն հայոց, Երևան, Եգեա, 2004, 247 էջ:

[56] Գրիգորյան Գ., նշվ. աշխ., էջ 21:

[57] Ролен-Жекмен М.Г., Армения, армяне и трактаты. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, Тип. “Рассвет”, 1896, 477 с.
Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, Москва, 1896.

[58] Чихачев П.А., Великие державы и Восточный вопрос, Москва, “Наука”, 1970, 224 с.

[59] Голобородько Н.Н., Турция, Изд.2-ое, испр. и доп., Москва, Кн-во “Руль”, (б.г.), 290 с.

[60] Дулина Н.А., Реформы танзимата и шариат. В Книге Ислам в истории народов Востока., Москва, Наука,1981, 189 с.

[61] Фадеева И.Л., Официальные доктрины в идеологии и политике Османсмой империи (османизм-паносманизм) XIX-начало XXв.,Москва, Наука, 1985, 270 с.

[62] Шеремет В.И., Османская империя и Западная Европа вторая треть XIX в., Москва, Наука, 1986, 307 с.

[63] Фадеева И.Е., Мидхат паша, Москва, Наука, 1977, 168 с.

Առաջին ենթագլխում՝ «Ազգային սահմանադրության ընդունման նախադրյալները», համառոտ ցույց են տրվում Ազգային սահմանադրության ձևավորման իրավաքաղաքական, ազգային-հասարակական նախադրյալները: Հայ իրականության մեջ՝ ժողովրդավարական գաղափարների տարածման արդյունքում նախկինում գերակայող կրոնական գիտակցությունն աստիճանաբար իր տեղը զիջեց ազգի համախմբման գաղափարին:

Հայ համայնքի ներքին կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, ազգային գաղափարախոսության տարածումը պահանջում էին քաղաքական կյանքի նորացում: Ձևավորվող ազգային նոր գիտակցությունն ուղենշում էր ազգային կյանքի մշակութային, բարոյական, տնտեսական, քաղաքական, սոցիալական զարգացման ուղղություններն ու հեռանկարները:

XIX դարի կեսին ծավալված հայոց սահմանադրական շարժումն ընթացել է պատմա-քաղաքական բարդ իրողությունների պայմաններում, ներառել ազգային-քաղաքական տարբեր հոսանքների գործունեությունը: Սահմանադրական շարժման ընթացքում բյուրեղացել են ազգային գերիմդիրները, ճշգրտվել սկսկալվող նպատակները: Ազգային սահմանադրության ընդունումից (1860թ.) և վավերացումից (1863թ.) հետո սահմանադրական շարժումը գոյատևել է ձեռք բերված արժեքների պահպանման, սահմանադրականության գաղափարի ամրապնդման, իրավաքաղաքական մշակույթի զարգացման, սահմանադրության բարեփոխման և այլ ձևերով:

Ուշադրության է արժանի տարբեր հեղինակների կողմից Ազգային սահմանադրության գնահատման խնդիրը, որոնք տարաբնույթ, երբեմն էլ իրարամերժ տեսակետներ են՝ կախված սահմանադրությունից ունեցած սկսկալիքներից, ազգային խնդիրների ընկալման ու լուծման եղանակների տարբերություններից, մտածողների հայեցակարգային մոտեցումներից:

1860թ. Ազգային սահմանադրության նպատակն էր կազմակերպել կրոնական և աշխարհիկ մի հաստատություն, որի իրավասությունները, սակայն ավարտվում էին այնտեղ, որտեղ սկսվում էին պետության իրավունքները: Նրանում բացակայում էր հայության հավաքական և անհատական իրավունքների երաշխավորությունն ապահովող որևէ կառույցի առկայությունը: Սակայն նշված հանգամանքները չեն արժեզրկում Ազգային սահմանադրությունը: Ավելին, որպես քաղաքական փաստաթուղթ, սահմանադրությունը կարգավորում էր հասարակական գործընթացներն ազգային կյանքում: Այն լուրջ դերակատարություն ունեցավ արևմտահայերի հասարակական կյանքի զարգացման, լուսավորության և մշակույթի տարածման գործում:

Երկրորդ ենթագլխում՝ «Ազգային ժողովը սահմանադրական կառույց» վերնագրով, Ազգային սահմանադրությունը դիտարկվում է որպես հայ իրավաքաղաքական մտքի բացառիկ հուշարձան, որն իրավականորեն ամրագրեց.

- հայության էթնիկական ամբողջությունը, սեփական ինքնավարություն ունենալու իրավունքը և դրա սահմանները,
- ազգային ինքնակառավարման մարմինների համակարգը, դրանց լիազորությունները, գործառույթները,
- հայության որոշ՝ թեկուզև սահմանափակ իրավունքները,
- հայ ազգի և թուրքական պետության փոխհարաբերությունների կարգավորումը հիշյալ փաստաթղթով:

Միաժամանակ պարզաբանվում են Ազգային սահմանադրության անվան հետ կապված պատմագրության մեջ առկա տարաբնույթ կարծիքները (սահմանադրություն թ՞ե կանոնադրություն), ինչը պայմանավորված էր

սահմանադրության իսկությունը ժխտողների այն մտայնությամբ, որ չի կարող լինել սահմանադրություն ինքնուրույն պետության բացակայության պայմաններում և որ սահմանադրության հեղինակները չեն տարբերել «կանոնադրություն» և «սահմանադրություն» տերմինները[64]:

Առանձնակի ուշադրություն է դարձվում 1860 թ. մայիսի 24-ին Ազգային ժողովի կողմից ընդունված և 1863 թ. մարտի 17-ին Բ.Դռան կողմից հաստատված սահմանադրությունների էական տարբերություններին, որտեղ նվազեցված էր եկեղեցու, պատրիարքի և հոգևորականության դերն Ազգային ժողովում: Տրվում են նաև ազգային ինքնակառավարման համակարգը մարմնավորող Ազգային վարչության մարմինների և հաստատությունների գործառույթները, Ազգային ժողովի երեսփոխանի իրավական կարգավիճակը:

ԵՐԿՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Պատրիարքն Ազգային ժողովում» ներկայացվում են սահմանադրական շրջանի Կ.Պոլսի պատրիարքների ազգային, հասարակական գործունեության հիմնական ուղղությունները, նրանց դերակատարությունը ազգային-վարչական կառույցների գործունեության համատեքստում: Բացահայտվում են պատրիարքական ընտրությունների ժամանակ Բ.Դռան միջամտության ուրույն դրսևորումները Ազգային ժողովի պահպանողական և էֆենդիական դասի միջոցով, պատրիարքների հոգեկերտվածքի դերը բարձրացված խնդիրների հասարակական հնչեղության գործընթացում:

Երկրորդ ենթագլխում՝ «Ամենայն հայոց կաթողիկոսների ընտրության հիմնահարցը» վերնագրով, տրվում է Ռուսաստանի Նիկոլայ Ա կայսեր կողմից հաստատված 1836 թ.մարտի 11-ի եկեղեցական կանոնադրության («Պոլոժենիե») և Ազգային սահմանադրության միջև առկա հակասությունների վերլուծությունը կաթողիկոսական ընտրությունների անցկացման վերաբերյալ:

«Պոլոժենիեն» արևելահայությանը իրավունք էր վերապահում իբրև մի կրոնական առանձին համայնք պահպանել իր լեզուն և ազգային-կրոնական առանձնահատկությունները: Հայ եկեղեցու գլուխը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընտրվում էր համազգային ընդհանուր ժողովում աշխարհիկ և հոգևոր պատգամավորների քվեներով: Այսինքն կաթողիկոսն ընտրվում էր ոչ միայն ռուսահայերի, այլև արևմտահայերի, պարսկահայերի և հնդկահայերի քվեներով: Ստացվում էր, այսպիսով մի համազգային ընտրողական ժողով, որը, սակայն, ամբողջովին ենթարկվում էր ցարական կառավարության կարգադրություններին: Նույնիսկ կաթողիկոսի ընտրության մեջ այդ ժողովը կատարելապես ազատ ու անկախ չէր, քանի որ առաջադրում էր երկու թեկնածու, որոնցից մեկին հավանություն էր տալիս ցարը: Դրանով կառավարությունն իրեն իրավունք էր վերապահում կաթողիկոսական գահին բազմեցնելու իրեն հաճո անձնավորության: Բացի այդ, կաթողիկոսը դառնում էր ռուսական մի պաշտոնյա՝ ենթարկվելով Կովկասի փոխարքայի կամ կառավարչապետի հսկողությանը:

Ռուսաստանում պատրիարքական իշխանության ենթարկումը աշխարհիկ իշխանությանը տեղի էր ունեցել դեռևս Պետրոս Ա կայսեր կառավարման ժամանակ, (1720 թ.): Ռուսաց պատրիարքներն այնուհետև ոչ թե ընտրվում, այլ նշանակվում էին ցարի կողմից[65]: Համադրելով Ռուսաստանում պատրիարքների ցարի կողմից ուղղակիորեն նշանակվելու հանգամանքը և «Պոլոժենիեի» սկզբունքները, դժվար է

---

[64] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., գիրք 1, էջ 172:

[65] Տե՛ս Славянская энциклопедия, том 2, Москва, 2001, с.111.

նկատել, որ ցարն ընդամենը միջամտում էր Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունների գործընթացին և երկու առավելագույն քվեներ ստացած հոգևորականներից մեկին հռչակում կաթողիկոս՝ հետևելով նրա գործունեությանը: Եթե «Պոլոժենիեի» 13-րդ հոդվածով նախատեսվում էր, որ կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու համար յուրաքանչյուր թեմ աշխարհիկ և հոգևոր մեկական պատգամավոր էր ուղարկելու էջմիածին, ապա Ազգային սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն արևմտահայության Ազգային Ընդհանուր ժողովն էր միայն իրավասու ընտրել հայոց կաթողիկոսին:

Կաթողիկոսի ընտրության հարցը հայության կենսական խնդիրներից էր: Արևմտահայությունն այդ ընտրություններին մասնակցում էր ամեն անգամ տարբեր ձևով և վերջնական ընտրական համակարգ մշակելու շուրջ համաձայնություն ձեռք բերել այդպես էլ չի հաջողվում, իսկ 1891 թ. թուրքական կառավարության կողմից Ազգային ժողովի նիստերի հրավիրման արգելումը մոռացության է տալիս մեծ վեճը և Մակար կաթողիկոսի մահից հետո (1891թ.) արևմտահայությունն առաջին անգամ, կաթողիկոսական ընտրություններին մասնակցում է «Պոլոժենիեի» սկզբունքներով:

<u>Երրորդ ենթագլուխում՝</u> «Երուսաղեմի միաբանության, Կիլիկիայի և Աղթամարի կաթողիկոսությունների կնճիռը», անդրադարձ է կատարվում Երուսաղեմի միաբանության և ազգային իշխանությունների միջև առաջացած հակասությունների պարզաբանմանը: Երուսաղեմի խնդիրը ծագում է Հովհաննես Զմյուռնացի պատրիարքի մահից հետո (1860թ.), երբ միաբանությունը հրաժարվում է Ազգային ժողովի պատրաստած կանոնադրությունն ընդունել և «դուրսեն» պատրիարք ընտրել՝ սկիզբ դնելով «ներսեն-դուրսեն» պայքարին: Այդ պայքարն ավարտվեց, փաստորեն «ներսենականների» հաղթանակով և Եսայի Կարապետյանի Երուսաղեմի պատրիարք ընտրվելով (1864թ.): Միաբանության և Կ.Պոլսի պատրիարքության հարաբերությունները կանոնակարգելու և հետագայում խռովություններից խուսափելու համար Ազգային ժողովն ընդունում է Երուսաղեմի միաբանության կանոնագիրը (1865թ. մարտի 19-ին), որում հստակեցվում էին միաբանության ընդհանուր ժողովի գործառնությունները, պատրիարքի ընտրության կարգը, միաբանների իրավունքներն ու պարտականությունները: Սույն կանոնագիրը բարեփոխվում է 1887թ.: Նման անհրաժեշտությունը թելադրված էր միաբանության ֆինանսական ծանր ճգնաժամով: Նոր կանոնագրում բարեփոխվել էին պատրիարքական իշխանությանը վերաբերող հոդվածները, հանվել էին կանոնագիրը վերաքննելու և պատրիարքին պաշտոնանկ անելու հոդվածները, սահմանափակվել փոխառություններ վերցնելու միաբանության իրավունքները՝ ապագայում նոր պարտքերից խուսափելու համար:

Աղթամարի կաթողիկոսության խնդիրը Ազգային ժողովի օրակարգ է մտնում այն բանից հետո, երբ վիճակային եկեղեցական ժողովը որոշում է ընդունում Աղթամարի Խաչատուր և Կիլիկիայի Նիկողայոս եպիսկոպոսներին կաթողիկոսներ չճանաչելու մասին (1866 թ. հուլիսի 22-ին), քանի որ նրանք իրենց պաշտոնը ստանձնել էին ապօրինի ճանապարհով:

1731-1865 թվականներին Կիլիկիայի կաթողիկոսական գահը դարձել էր Աջապահյան տոհմի մենաշնորհը՝ տալով Աթոռին ժառանգական բնույթ: Սակայն Կիրակոս Բ (1855-1865 թթ.) կաթողիկոսի մահից հետո Աջապահյան տոհմից նոր կաթողիկոս չի ընտրվում, քանի որ Կ.Պոլսի պատրիարքը դեմ էր նման ժառանգական դրությանը և ցանկանում էր նոր կաթողիկոսին ընտրել Ազգային սահմանադրության սկզբունքներին համապատասխան: Արդյունքում, Կիրակոս Բ-ի մահից հետո, հայությունը բաժանվում է երկու «կուսակցությունների», որոնցից մեկը ցանկանում էր առանց պատրիարքարանի միջամտության Նիկողայոս եպիսկոպոսին կաթողիկոս

դարձնել, իսկ երկրորդները՝ ընդհակառակը կողմ էին պատրիարքարանի վերահսկողությամբ կաթողիկոսական ընտրություններ անցկացնելուն: Այս պառակտումն ավելի շուտ երկու հակամետ աղայական խմբավորումների միջև ընթացող պայքարի արդյունք էր, քան հայացքների:

Ազգային պատրիարքարանը ոչ միայն մերժում է Նիկողայոսին կաթողիկոս ճանաչել, այլև Պողոս Թաքթաքյան պատրիարքն իր կոնդակով անվավեր է հայտարարում նրա օծումը[66]:

Սիսն ալեկոծող խռովությունները հաջողվում է դադարեցնել միայն թուրքական կառավարության միջամտությամբ (1871 թվականի օգոստոսի 14-ին) կաթողիկոսական գահը զավթած Նիկողայոս եպիսկոպոսին Արմաշի վանք աքսորելով: Իր հերթին Կիլիկիայի նորընտիր Մկրտիչ Քեֆսիզյան կաթողիկոսը չենթարկվելով Ազգային ժողովի ընդունած որոշումներին, լքում է Սիսը և բնակություն հաստատում Մարաշում, այնուհետև՝ Հալեպում, չցանկանալով գործել սահմանադրության սկզբունքների համաձայն և նպատակ ունենալով Կիլիկիայի կաթողիկոսությունն ազգային միությունից առանձնացնել՝ չճանաչելով նաև էջմիածնի կաթողիկոսի գերագահությունը: Իր կաթողիկոսության 23 տարիները նշանավորվում են տեղի հայության, Ազգային պատրիարքարանի և Մայր Աթոռի դեմ անհնաստ պայքարով:

Աղթամարի եպիսկոպոս Խաչատուր Շիրոյանի անօրինական կաթողիկոս դառնալու հարցը նույնպես տասնյակ տարիներ Ազգային ժողովի օրակարգում էր: Ազգային ժողովի որոշմանը դեմ էր տեղի հայությունը և պահանջում էր Խաչատուր եպիսկոպոսին վերադարձնել իր պաշտոնին: Այդ կնճռոտը լուծելու համար կրկին միջամտում է Բ.Դուռը՝ Խաչատուր Շիրոյանին «ներողագիր» շնորհելով: Վերջինս շարունակում է իր ազգադավ գործունեությունը դեռ երկար տարիներ, իսկ նրա մահից հետո (1895 թ.) Աղթամարի կաթողիկոսական աթոռը թափուր է մնում:

Այսպիսով, Ազգային ժողովի ձեռնարկումները Երուսաղեմի միաբանության պարտքերը մարելու, Կիլիկիայի և Աղթամարի կաթողիկոսությունները բարեկարգելու ուղղությամբ չեն արդարանում: Ավելին, հակամարտություններն ազգային իշխանությունների և թեմականների միջև վերածվում են մի անհնաստ պայքարի, ինչի արդյունքում տուժում է տեղի հայությունը:

<u>ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ</u> - ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ բաղկացած է երեք ենթագլուխներից:

<u>Առաջին ենթագլուխը</u> վերնագրված է «Ազգային ժողովի կանոնագրի ընդունումը: Վարչության ձևավորման օրինագծերի առաջադրումն Ազգային ժողովում»: Այստեղ տրվում են Ազգային սահմանադրության գործառնության ժամանակ ի հայտ եկած Ազգային ժողովի նիստերի հրավիրման, անցկացման, առաջադրվող հարցերի քննարկման և այլ կանոնակարգային խնդիրների հաղթահարմանն ուղղված Ազգային ժողովի ձեռնարկումները: Նահապետ Ռուսինյանի կազմած Ազգային ժողովի ներքին կանոնադրությունը, որը ֆրանսիական խորհրդարանի ներքին կանոնադրության խմբագրված և տեղայնացված տարբերակն էր[67], հստակություն էր մտցնում նիստերի հրավիրման, անցկացման, քվեարկության գործընթացում: Ազգային ժողովի սույն կանոնադրությունը (ընդունվել է 1874 թվականի հոկտեմբերի 4-ին) գործադրության մեջ է դրվում աստիճանաբար այն խմբագրելու և սահմանադրության հետ առանձին հոդվածներ համապատասխանեցնելու վերապահումով: Նման որոշման ընդունման պատճառն այն էր, որ կանոնադրությունը պարունակում էր ոչ միայն հակասական

[66] Տե՛ս Իզմիրլեան Մ., նշվ. աշխ., էջ 676-683:
[67] Տե՛ս «Հայրենիք», Կ.Պոլիս, 1874, հոկտ. 22, թիվ 222:

այլև հակասահմանադրական հոդվածներ: Օրինակ, անհամապատասխանություն կար սահմանադրության 59 և կանոնադրության 49, համապատասխանաբար 61-րդ և 1-ին հոդվածների միջև:

Ազգային ժողովի կողմից վերանայվում են նաև Կենտրոնական վարչության կազմակերպման սկզբունքները: Առաջադրվում են վարչության անդամների ընտրության նոր սկզբունքներ: Եթե նախկինում վարչության անդամներն ընտրվում էին Ազգային ժողովի կողմից, ապա այժմ այն վերապահվում էր պատրիարքին:

Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվում նաև դատավարության կանոնների նոր ծրագիր, ինչը, սակայն այդպես էլ չի դրվում հիստերի օրակարգում:

Նշված բոլոր ծրագրերն այդպես էլ մնացին թղթի վրա և Ազգային ժողովը վերածեցին դատարկ խոսարանի՝ այդ ժողովի գոյությունն ինչ-որ կերպ հիմնավորելու համար: Կարծում ենք, որ այս կարևոր կառույցի ոչ լիարժեք կայացմանը խոչընդոտ էին հանդիսանում ոչ միայն թուրքական իշխանությունները, այլև արևմտահայ «ազգային ջոջերը», որի արդյունքում Ազգային ժողովի գործունեությունը մնում էր հիմնականում բարոյականության, և ոչ թե քաղաքացիական նորմերի սահմաններում:

<u>Երկրորդ ենթագլխում</u> «Ազգային տուրքի խնդիրը», քննարկվում է Ազգային սահմանադրության 90-րդ հոդվածով նախատեսված ազգի ընդհանուր ծախսերին յուրաքանչյուր չափահաս անհատի ունեցվածքով պայմանավորված տարեկան տուրքի վճարման կարգը: Գոյություն ուներ տուրքի երկու տեսակ՝ ընդհանուր, որի հավաքման չափորոշիչների մշակումը վերապահվում էր Քաղաքական ժողովին և հաստատվում Ազգային ժողովի կողմից, և մասնավոր, որը հավաքվում էր Թաղային խորհուրդների կողմից՝ թաղի մասնավոր ծախսերը հոգալու համար:

Ազգային սահմանադրությունը յուրաքանչյուր անձի վրա իր կարողության չափով տուրք վճարելու պարտականությունից բացի, ակտիվ ընտրական իրավունք էր վերապահում 25 տարին լրացած, օսմանահպատակ և տարեկան 75 ղուրուշ ազգային տուրք վճարող անձանց: 1863 թվականին, առաջին ազգային երեսփոխանական ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր թաղի բնակչից առանձնացվում են 75 ղուրուշ և ավելի տուրք վճարողները, որոնք էլ իրականացնելով սահմանադրությամբ նախատեսված ակտիվ ընտրական իրավունքը, մասնակցում էին Ազգային ժողովի ընթացիկ ընտրություններին: Սակայն թաղական խորհուրդների անհետևողականության հետևանքով գործընթացը մնում է անավարտ: Շատ հաճախ թաղում 75 ղուրուշ տուրք վճարելու հնարավորություն ունենում էին քչերը, ինչի արդյունքում, երեսփոխան էին ընտրվում նույնիսկ 12 քվեով: Դրամական ցենզի առկայությունը ընտրական իրավունքում գրեթե անհնար էր դարձնում գավառահայության մասնակցությունը Ազգային ժողովի ձևավորմանը: Ազգային տուրք վճարելու նրանց անկարողությունն անելանելի դրության մեջ էր դնում ազգային մարմինների գործունեությունը: Ազգային ժողովի կողմից ընդունված որոշումները տուրքի բաշխման և գանձման վերաբերյալ գործնականում չէին կիրառվում, առաջին հերթին, արևմտահայության ծանր սոցիալ-տնտեսական վիճակի պատճառով: Ազգային ժողովի ատենագրությունները և Քաղաքական ժողովի տեղեկագրերը վկայում են, որ վարչության մարմինները մշտապես դժվարություններ են ունեցել տուրքի հավաքման հարցում և հաճախ ստիպված են եղել դիմել որևէ մեծահարուստի՝ Ազգային վարչության ծախսերը ծածկելու համար:

<u>Երրորդ ենթագլխում՝</u> «Սահմանադրության վերաքննության հարցը», լուսաբանվում են դրա անհրաժեշտության պատճառները.

1. Ազգային ժողովն իր զանազան հանձնաժողովներով և խորհուրդներով վերածվել էր դանդաղաշարժ, բարդ, անգործունակ մի կառույցի, որը կարիք ուներ պարզեցման և արդիականացման:

2. Պատճառաբանելով գավառական 40 երեսփոխանների ընտրությունների ձգձգումը, Ազգային ժողովում, սահմանադրությամբ նախատեսված 71 երեսփոխանների ներկայությամբ որոշումներ ընդունելու փոխարեն 51 ներկաներով օրինական հիստեր հրավիրելու հակասահմանադրական որոշում էր կայացվել:

3. Քաղաքական ժողովի անդամներ էին ընտրվում տարբեր գաղափարա-քաղաքական ուղղվածություն ունեցող անձինք, ինչը անհնարին էր դարձնում միասնական որոշումներ ընդունելու հնարավորությունը: Դրա հետևանքով անընդհատ հրաժարականներ էին ներկայացվում և Ազգային ժողովը հիմնականում զբաղվում էր հրաժարվածների փոխարեն նորերին ընտրելով:

4. Անհամաձայնություն էր ծագել Քաղաքական և Կրոնական ժողովների միջև:

Սահմանադրության վերաքննության ողջ ընթացքը ցույց տվեց, որ աշխատանքի այդ եղանակը դատապարտված էր անհաջողության: Դրանում կարելի է համոզվել Ազգային ժողովի ատենագրություններն ուսումնասիրելով: Գրեթե բոլոր հիստերում, որպես օրակարգի գլխավոր հարց, դրվում էր սահմանադրության վերաքննության խնդիրը, սակայն ընթացքում առաջ էին քաշվում այլ հարցեր (օրինակ Սսի և Աղթամարի կաթողիկոսության հարցը), ինչի արդյունքում սկսվում էին անպտուղ վիճաբանություններ:

1866-1875 թվականների ընթացքում Ազգային ժողովում սահմանադրության վերաքննության հարցի կապակցությամբ ձևավորվել էին չորս հանձնաժողովներ, առաջադրվել երեք նախագծեր և երկու տեղեկագրեր: Փաստորեն ինը տարի Ազգային ժողովին չէր հաջողվում վերջնական լուծում գտնել և առաջադրել այնպիսի փոփոխություններ, որոնք առավել ճկուն և գործնական կդարձնեին սահմանադրությունը: Այս միտումը շարունակվում է նաև հետագա տարիներին:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Ազգային ժողովը որոշում է սահմանադրությունը իբրև «նվիրական օրենք», թողնել անփոփոխ, իսկ անգործադրելի և գործնականում դժվարություններ առաջացնող սկզբունքները բարեփոխել կանոնադրության միջոցով:

Սահմանադրության վերաքննության խնդիրը ևս անլուծելի մնաց՝ հիմնականում մանրաթեմայնության, կանոնական նորմերի գերագնահատման և գործնականում ոչ կիրառելի պատկերացումներին իրավական ձևակերպումներ տալու անպտուղ մոտեցումների պատճառով:

<u>ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ</u> «ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ» խորագրով, բաղկացած է երեք ենթագլուխներից:

<u>Առաջին ենթագլուխը</u> կրում է «Ազգային ժողովի ձեռնարկումները կրթության և դաստիարակության բնագավառում» վերնագիրը: Այստեղ վերհանվում է արևմտահայ դպրոցների բարեշրջման գործընթացում Ազգային սահմանադրության նշանակությունը, որի 45-րդ հոդվածը Ուսումնական խորհուրդի վրա էր դնում դաստիարակության և կրթության ընդհանուր տեսչությունը:

Լուսավորության և կրթության առջև ծառացած խնդիրներից էին վարժարանների սակավությունը, դրանց ֆինանսական անզորության, ուսյալ մանկավարժների բացակայության կնճիռները, որպիսիք հաղթահարելու համար 1864 թ. Ազգային ժողովի կողմից ընդունվում է ազգային վարժարանների բարեկարգության ընդհանուր կանոնադրություն: Կանոնադրությունը, ամբողջությամբ վերցրած, համապատասխանում էր արևմտահայության ազգային-կրթական շահերին և ժամանակի պահանջներին: Սակայն այն որոշ չափով գործադրվել է Կ.Պոլսում, Զմյուռնիայում և մի քանի այլ խոշոր քաղաքներում, որտեղ դպրոցներն ունեին որոշակի նյութական միջոցներ և ուսուցչական կադրեր: Այլ էր դրությունը Արևմտյան Հայաստանի հեռավոր գավառներում, որտեղ թուրքական իշխանությունների կողմից

ճնշված ու հալածված հայությունը չունենալով ֆինանսական միջոցներ, չէր էլ կարող անգամ երազել կրթություն ստանալու մասին:

Այսպիսով, ազգային իշխանությունների կողմից գործնական բավարար քայլեր չեն կատարվում կրթական ոլորտում միասնական համակարգ մտցնելու և ֆինանսավորելու ուղղությամբ: Կրթական հաստատությունները հիմնականում գոյատևում էին, որպես կանոն, ոչ թե ազգային վարչության, այլ կրթական ընկերությունների աջակցության և ֆինանսավորման շնորհիվ: Այստեղից՝ կրթական ընկերությունների ինքնուրույնությունը Ազգային ժողովից և իշխանություններից, որը խառնաշփոթ էր մտցնում վարժարանների ծրագրերի և կանոնադրությունների մեջ, խախտում դրանց միասնականությունը:

Երկրորդ ենթագլուխը՝ «Գավառական հարստահարությունների խնդիրը», արծարծում է Ազգային ժողովի օրակարգում դրված կարևորագույն հարցերից մեկը: Առաջին անգամ հարստահարությունների քննարկմանը հանդիպում ենք 1865 թ. կազմված «Տեղեկագիր Քաղաքական ժողովոյ Կեդրոնական Վարչութեան առ Ազգային Ընդհանուր ժողով» փաստագրի մեջ, որտեղ նշվում էին բազում բողոքներ՝ քրդական ավազակու և թուրքական բյուրոկրատիայի կողմից տուրքերի ծանրացման, ծավալվող ապօրինությունների և կամայականությունների մասին: Սակայն, արևմտահայության հարստահարությունների հարցը որոշակիորեն դրվում է Ազգային ժողովի օրակարգում միայն Մ.Խրիմյանի պատրիարքության շրջանում: Ազգային ժողովի կողմից ձևավորված հանձնաժողովն ուսումնասիրելով վերջին 20 տարիների ընթացքում գավառներից պատրիարքարան և Կենտրոնական վարչություն ուղարկված բողոքները, 1871 թ. հոկտեմբերի 8-ի նիստում ներկայացնում է երկու մասերից բաղկացած տեղեկագիր: Տեղեկագրի առաջին մասում «Քննութիւն գաւառացի ազգայնոց վիճակին» նշվում էին հարստահարությունների ոլորտները, մեկ առ մեկ թվարկվում յուրաքանչյուր վիլայեթի առաջնորդական վիճակների համար ուղարկված բողոքագրերը (թագրիրները), որոնց թիվը հասնում էր 529-ի[68]: Դրանք դասավորված էին ըստ հարստահարությունների տեսակների՝ արքունական տուրքերի ապօրինի գանձում, կառավարության պաշտոնյաների զեղծումներ, կանանց և երեխաների բռնի մահմեդականացում, կրոնադավանական խնդիրների պատճառով հալածանքներ լուսավորչական հայերի նկատմամբ և այլն:

Տեղեկագրի երկրորդ մասը՝ «Դարման գաւառացի ազգայնոց վիճակին» ներառում էր հանձնախմբի դիտողություններն ու գործնական առաջարկությունները կացությունը քիչ թե շատ բարվոքելու ուղղությամբ:

Ազգային ժողովում հարստահարությունների հարցի կապակցությամբ նույնպես սկսվում են երկար վիճաբանություններ և միայն 1872 թվականի ապրիլի 12-ին տեղեկագիրը հանձնվում է Բ.Դռանը՝ եպարքոս Մահմուդ փաշային: Բ.Դուռը խոստանում է գոհացում տալ հայերի պահանջներին և պատժել հանցավորներին: Սակայն այս խոստումները, որոնք նման էին Բ.Դռան տված բոլոր նախորդներին, իրականում ոչ մի գործնական նշանակություն չեն ունենում:

Այս տեղեկագիրը, սակայն պատմական մեծ արժեք է ներկայացնում, առաջին հերթին նրանով, որ պատրիարքարանի կողմից մինչ այդ գավառահայության հարստահարությունների մասին պետությանը ներկայացրած թագրիրներից տարբերվում էր իր ընդհանրականությամբ: Մյուս կողմից այդ հուշագրի պատրաստությամբ գավառահայության վիճակի բարելավման հարցը հայտնվում է հայ հանրային կյանքի ուշադրության կենտրոնում:

---

[68]Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ (1870-1874 թթ.), էջ 475-476:

Այսպիսով, գործնականում հանձնաժողովի կատարած աշխատանքը թեև արդյունք չունեցավ, սակայն հետագայում նրա կողմից հավաքված մեծ քանակությամբ նյութերն օգտագործվեցին Ներսես Վարժապետյան պատրիարքի կողմից 1876 թվականին նոր տեղեկագիր կազմելու ժամանակ: Խորհրդարանական հանձնաժողովի կազմած այս նոր (1876 թ. օգոստոսի 10) հարստահարությունների մասին տեղեկագրից պարզ է դառնում, որ 1872-1876 թվականների ընթացքում Բ.Դռանը մատուցված գավառական հարստահարություններին վերաբերող 38 թագրիրները կամ անպատասխան էին մնացել, կամ հետաձգվել, կամ էլ կառավարության կողմից մոռացության մատնվել: Այս երկրորդ տեղեկագրի նպատակն էր ցույց տալ, որ հայության դրությունը բարվոքելու և հարստահարությունները դադարեցնելու համար ոչ մի միջոց չէր իրականացվել:

Տեղեկագրում հարստահարությունների դեմ պայքարելու համար Բ.Դռանն առաջարկվում էր բարեկարգություններն ավելի լայն հիմքերի վրա դնել, վիլայեթի արքունի ժողովները ձևավորել ժողովրդի վստահությունը վայելող անձանցից, գավառական ազգային վարչությունների և հոգևոր առաջնորդների տեղական իշխանություններին ուղղված բողոքները նկատողության առնել, քրիստոնյաների վկայությունն ընդունել, բռնակալ քրդերին պատժել:

Ինչպես նախորդ տեղեկագիրը նորը նույնպես որևէ գործնական դերակատարություն չի ունենում հարստահարությունները կանխելու գործում:

<u>Երրորդ ենթագլխում</u> «Հայկական հարցն Ազգային ժողովում» տրվում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ն.Վարժապետյանի և նրա համախոհների՝ ինքնավարության ձեռքբերմանը միտված ձեռնարկումների վերլուծությունը:

Ներսես պատրիարքի գործողությունները Հայկական հարցի ուղղությամբ միշտ չէ, որ արժանանում էին ժամանակի հայ մտավորականների, քաղաքական գործիչների, Ազգային ժողովի երեսփոխանների հավանությանը: Շատերն էին կարծում, որ Արևմտյան Եվրոպայով դեպի Բեռլին աճապարող հայ պատգամավորության այցելությունները ոչ թե հայ դիվանագիտության հաղթանակն էր, Ն.Վարժապետյանի ու Մ.Խրիմյանի կազմակերպչական գաղտնի գործունեության արգասիքը, այլ Աբդուլ Համիդի խորամանկ խաղը՝ Ռուսաստանին երկմտանքի մեջ դնելու և ազատագրվել ցանկացող արևմտահայության նկատմամբ վերաբերմունքը փոխելու համար

Դեռևս Բեռլինի վեհաժողովի բացման հաջորդ օրը՝ հունիսի 2-ի Ազգային ժողովի նիստում Ներսես պատրիարքը երեսփոխաններին ծանոթացնելով վեհաժողովում քրիստոնյա ազգերի իրավունքները պաշտպանելու ուղղությամբ միջոցառումներին, հայտարարում էր, որ Հայկական հարցը ըստ արժանվույն ներկայացվել է Բ.Դռանը և եվրոպական պետություններին, որոնք խոստացել էին նկատողության առնել հայերի պահանջները:

Սակայն Բեռլինի վեհաժողովից հետո Ներսես պատրիարքը և Մ.Խրիմյանը մեղադրվում են հայոց բարեկորգումները և ինքնավարության ծրագիրը վիժեցնելու մեջ: Քննադատները գտնում էին, որ նրանք իրենց անխոհեմ քայլերով գրգռել էին ռուսներին և պատշաճ ձևով չէին ներկայացրել Հայկական հարցը վեհաժողովում:

Այսպիսով, ազգային իշխանությունների ձեռնարկումները ինքնավարություն ձեռք բերելու համար, անհաջողության մատնվեցին, իսկ թուրքական կառավարությունը տերությունների լռելյայն համաձայնությամբ վիժեցրեց նույնիսկ բարեկորգումների գործընթացը: Դրանից հետո թուրքական պետական քաղաքականությունը սրբագործեց հայերի դաժան հալածանքները և հետապնդումները՝ իրականացնելով նրանց տնտեսական քայքայման, հողազրկման, հայկական կապիտալը ներքին ու արտաքին առևտրի ասպարեզից դուրս մղելու և

առհասարակ հայերի ազգային իրավունքները և իրենց՝ հայերին, ամբողջովին ոչնչացնելու գործելակերպը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ մեջ հանրագումարի են բերվում հետազոտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1863 թվականին մարտի 17-ին սուլթանի հրամանով հաստատված և գործադրված Ազգային սահմանադրությունը պատմական, հասարակական-քաղաքական և իրավական առումով ուշագրավ երևույթ էր արևմտահայության կյանքում: Եվրոպական արժեքների ներմուծումը հեղաշրջող դերակատարություն ունեցավ հայ մարդու ինքնագիտակցության վրա: Հայ սահմանադրականների հմուտ գործունեության շնորհիվ արևմտյան արժեքները լրացվել են ազգային մտածելակերպին, խառնվածքին, մշակութային պատկերացումներին, ազգային սովորույթներին ու ավանդույթներին համապատասխան բովանդակությամբ: Զարգացում ապրեց և հասարակական ազդեցություն ձեռք բերեց պարբերական մամուլը: Այն ոչ միայն լուսաբանում էր Ազգային ժողովում ընդունված որոշումները, այլև դրանց տալիս էր հասարակական հնչեղություն:

Ազգային սահմանադրությամբ օրենսդիր իշխանություն հանդիսացող Ազգային ժողովը, իր օրենքներով հստակեցրեց ազգային գործերի հիմնական և ընդհանուր ուղղությունները: Այն հայության գիտակցության մեջ ներդրեց ազգային կյանքի խնդիրներով հետաքրքրվելու և զբաղվելու անհրաժեշտությունը, ինչը հզոր խթան հանդիսացավ ազգային ոգու զորացման համար:

Ազգային սահմանադրությունից սկսկալվող փոփոխություններն իրավական առումով չկատարվեցին: Կարծում ենք ժամանակաշրջանի հայ և եվրոպական քաղաքագետների ու իրավագետների քննադատությունն ուղղված էր սահմանադրությանը՝ առավելապես իբրև իրավական փաստաթղթի: Բայց, սահմանադրությունը ոչ միայն զուտ իրավական փաստաթուղթ է, որն արտացոլում և կարգավորում է իրավական հարաբերությունները հասարակության մեջ, այլև ծրագրային-քաղաքական փաստաթուղթ, որը նշագծում է հասարակության և պետության զարգացման գլխավոր ուղիները՝ կատարելով նաև գաղափարախոսական գործառույթ:

Ազգային ավանդույթներին հավատարմության կարևորումն ընդգծված քաղաքական միտում ուներ, ինչը Ազգային ընդհանուր ժողովում որոշումների ընդունման հիմքն էր հանդիսանում: Դրա նշանակալի օրինակներից է Ս.Էջմիածնի կաթողիկոսի ընտրության «Պոլոժենիեի» հաստատած եղանակի քննությունը, Մայր Աթոռի իրավասությունները, անկախությունը և ինքնիշխանությունը ապահովելու միջոցների որոնումը:

Հայ սահմանադրականներն ընտրելով ազգային հարցերի լուծման սահմանադրական ուղին, իրենք էին «իշխող» պետությանը հուշում քաղաքակիրթ ձևով ապրելու իրամայականները, ինչը հստակ երևում է գավառական հարստահարությունների տեղեկագրում, որում մատնանշվում էին թուրքական իշխանությունների կոմից այն միջոցառումների իրականացումը, որը վերջ կտար այդ արատավոր երևույթին:

Ազգային ժողովի կողմից ընդունված մի շարք օրենքներ, մասնավորապես կրթության ոլորտի, դատական համակարգի բարելավման ուղղությամբ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում, ինչը կարող է այսօր էլ օգտակար լինել ազգային արժեհամակարգի ներդրման, հայեցի դաստիարակության գործընթացում: Սակայն օրենքների մեծ մասն անհնարին էր գործնականում կիրառել, ինչը պայմանավորված էր ժամանակի քաղաքական այն իրավիճակով, որը տիրում էր Օսմանյան կայսրությունում XIX դարի երկրորդ կեսին: Չմոռանանք նաև այն հանգամանքը, որ Ազգային սահմանադրությունը վավերացվել էր իբրև հպատակ

ժողովրդին շնորհված կանոնադրություն և Օսմանյան կայսրության մեջ չէր կարող ունենալ իրավական ազդեցիկ ուժ:

Ազգային ժողովի գործունեության ընթացքում առաջացան մի շարք դժվարություններ, որոնց դեմ երկար և անօգուտ պայքար էր մղվում.

- Ազգային ժողովը վարչական մարմինների անդամների ընտրության ժամանակ չէր առաջնորդվում որևէ սկզբունքով, որի արդյունքում, այնտեղ հայտնվում էին ոչ իրավասու անձինք՝ այն դեպքում, երբ նման մարմիններում աշխատելու համար անհրաժեշտ էին արհեստավարժ մասնագետներ: Որոշ դեպքերում էլ ընտրվում էին այնպիսի անհատներ, որոնք իրենց համոզմունքներով հակամետ դիրքերում էին գտնվում, ինչը ջլատում էր, մասնավորապես Քաղաքական ժողովի գործունեությունը, քանի որ հիմնականում այդ մարմնի վրա էր ծանրանում ամբողջ հասարակական գործերի ղեկավարումը: Վարչության գործունեությունն իր նպատակին ծառայելու համար առաջին հերթին պետք է կազմված լիներ համակիր անդամներից: Ընդհարումները Քաղաքական ժողովի անդամների միջև ավարտվում էր հրաժարականներով, ինչի արդյունքում Ազգային ժողովն անընդհատ զբաղված էր կամ նոր Քաղաքական ժողովի կազմ ընտրելով, կամ էլ հրաժարվածներին պաշտոնավարությունը շարունակել համոզելով:
- Ազգային ժողովն ընտրելով վարչության մարմիններին, հետագայում հետամուտ չէր լինում նրա գործադրած միջոցների վերահսկմանը:
- Գավառահայության մասնակցությունը Ազգային ժողովի գործունեությանը իրականում ձևական էր, քանի որ ընտրատարածքների համամասնությունը խախտված էր: 140 երեսփոխաններից միայն 40-նն էր ընտրվում գավառներից, ինչն էլ զուտ անվանական բնույթ ուներ:
- Ազգային վարչությունն իր ժողովներով, հանձնաժողովներով, խորհուրդներով, հոգաբարձություններով վերածվել էր ծանրաշարժ մեքենայի:
- Ընտրական իրավունքում դրամական ցենզի առկայությունը այն դարձնում էր ոչ թե համընդհանուր, այլ դասային:
- Պասսիվ ընտրական իրավունքի նախապայման հանդիսացող «տերության օրենքներին տեղյակ և ազգային գործերում հմուտ» լինելու նախապայմանն ընդհանրապես անհեթեթություն էր, քանզի այդ հմտությունները որոշող որևէ մարմին գոյություն չուներ:
- Չնայած որ Ազգային ժողովը պարտավոր էր վարչության երկամյա հաշվետվությունը ստանալ, քննել բյուջեի ծախսերը, այդուհանդերձ ոչ մի անգամ նախօրոք բյուջե չէր կազմվում, առավել ևս գործադրվում կամ վերահսկվում:
- Բացի պատրիարքից, երեսփոխաններն աշխատավարձ չէին ստանում, ինչի հետևանքով շատերը թերանում էին իրենց պարտականություններում՝ բացակայելով ժողովներին:
- Ազգային ժողովի նիստերը գումարվում էին առանց օրինական մեծամասնության, ինչը պատճառ էր դառնում ընդունված որոշումների վիճահարույց դառնալուն:
- Ազգային սահմանադրության գործադրությունից հետո անհրաժեշտություն առաջացավ այն բարեփոխելու: Սակայն առաջարկված փոփոխությունների շուրջ երկարատև վիճաբանություններն անընդհատ ձգձգվում էին, ինչի արդյունքում սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու հարցը

Ազգային ժողովի գործունեության գրեթե ամբողջ ժամանակաշրջանում եղել է օրակարգի հարց:

- Ազգային խնդիրների լուծմանը խոչընդոտում էր նաև ֆինանսական միջոցների բացակայությունը, ինչը Ազգային վարչությունը դարձնում էր իներտ:
- Ֆինանսական միջոցներ ձեռք բերելու համար սահմանադրությամբ հաստատված տուրքի գանձումը նույնպես նշանակալի արդյունք չէր տալիս՝ հատկապես գավառահայության ծանր վիճակի պատճառով:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Արևմտահայության պայքարը հանուն ազգային սահմանադրության, «Գյուղատնտեսական մթերքների որակի ու անվտանգության արդի հիմնախնդիրները և ագրարային գիտակրթական համակարգի զարգացման միտումները» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ՀԳԱ, 2005, էջ 64-70:
2. Սահմանադրականության գաղափարը հայ իրավաքաղաքական մտքի պատմության մեջ, Материалы международной научной конференции, посвященной 75-летию основания государственного аграрного университета Армении, Ереван, ГАУА, 2006, с. 50-55.
3. Պատրիարք Ներսես Վարժապետյանի կյանքն ու գործունեությունը, Материалы международной научной конференции “Охрана и использование водных ресурсов Южно-Кавказского региона”, Ереван, ГАУА, 2009, с. 96-101.
4. Ամենայն հայոց կաթողիկոսների ընտրությունների հիմնահարցը Կ.Պոլսի Ազգային ժողովում, Материалы международной научной конференции посвященной 80-летию государственного аграрного университета Армении, Ереван, ГАУА, 2011, с. 197-200.
5. Նորմատիվ-իրավական կարգավորումները և ազգային հիմնախնդիրներն արևմտահայերի Ազգային սահմանադրության համատեքստում, Կանթեղ: Գիտ. հոդվածների ժող., Երևան, Ասողիկ, 2011, գիրք 2 (47), էջ 151-157:

НУРБЕКЯН ЛУСИНЕ ЗАЛИКОЕВНА

НАЦИОНАЛЬНО-АДМИНИСТРАТИВНОЕ ПОЛОЖЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН (1860-1894гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 12 июля 2011г. в 14^{00} ч. по адресу: г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4 на заседании специализированного совета 004 при институте истории НАН РА.

РЕЗЮМЕ

Во второй половине 19-го века актуальным стал вопрос формирования национальных органов и предоставлении им правового статуса в контексте социальных реформ в Османской империи. В первую очередь речь идет о Национальной конституции и как результат – национальной администрации. Впервые в армянской действительности созывалось Национальное собрание - своеобразный парламент - регулирующий внутренние национальные вопросы западных армян.

Национальная конституция оставила ощутимый след в армянской общественно-политической мысли, играла огромную роль в формировании национального самосознания и развития демократическо - парламентарских идей. В лице Национальной конституции в действительности западных армян формировался новый национально административный институт, где поднимались и обсуждались жизненно важные вопросы. Другое дело - как национальным органам удавалось реализовать их.

Одним из наиболее важных вопросов являются оценки деятельности Национального собрания западных армян. Эта проблема в советской историографии затрагивалась лишь в контексте деятельности армянских духовных, общественно - политических и культурных деятелей, но в основном роль этого важного национального института в истории нашего народа была недооценена.

Изучения и анализ деятельности Национального собрания западных армян имеет важное историческое и политическое значение в становлении национального законодательства, национальной идеологии и парламентаризма Республики Армения.

Цель данного исследования – раскрыть основные направления и функции деятельности Национального собрания западных армян во второй половине 19-ого века, исходя из современных реалей пересмотреть

существующие подходы, которые деятельность Национального собрания считали бессмысленным, и недооценивали его роль в процессе повышения национального самосознания.

В рассматриваемом периоде национально - административное положение западных армян изучена недостаточно. Армянские ученые - историки, философы, юристы, политологи - затрагивали вопрос деятельности национального собрания западных армян лишь с точки зрения социально - экономического, политического положения, национально - освободительного движения Западной Армении, или же в контексте исследования истории армянской правовой мысли. Однако при этом авторы не затрагивали вопросы, касающиеся национально-административных институтов.

Национальная конституция регулировала культурные, религиозные и общественные вопросы народа. С юридической точки зрения Национальная конституция зафиксировало результаты борьбы народа и его прогрессивной интеллигенции, обеспечив интеллектуально - культурное развитие армянского народа. В то же время, турецкое правительство всегда стремилось ослабить и помешать деятельности национальных конституционных учреждений.

Ряд законов, принятых национальным собранием, в частности в сфере улучшения образования и судебной системы представляют большой интерес и могут быть полезными в процессе внедрения национальных ценностей и воспитания.

Но, к сожалению, большинство законов, принятых национальным собранием практически невозможно было реализовать, что обусловлено политической ситуацией Османской империи того времени. Не надо забывать так же тот факт, что Национальная конституция была ратифицирована как “свод законов” подаренная подданному народу, и в Османской империи не могла иметь высшую юридическую силу.

NURBEKYAN LUCINE ZALIKO

NATIONAL-ADMINISTRATIVE SITUATION OF WESTERN ARMENIANS (1860 – 1894)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07. 00.01.

The defense of the dissertation will be held on 12 July 2011, 14^{00} in the Specialized Council 004 by the Institute of History of National Academy of Sciences of RA (Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

In the second half of the 19th century, in the Turkish society, within the context of social reforms, the formation of national bodies and provision of legal status became an urgent issue for the Western Armenians. First of all, it was about the National Constitution and, as a result, about the national administration. The National Assembly, a kind of Parliament, with its elected deputies, was held for the first time in the Armenian reality in regard with the national affairs of Western Armenian Community and internal issues. The National Constitution has left its tangible trace on the Armenian social and political thought, increase of the national consciousness and enrooting of democratic-parliamentary ideas. In the person of the National Constitution, a new national administrative structure had access to the reality of Western Armenians, where the vital issues concerning the Armenians were carefully raised. The idea was to what extent the national authorities could succeed in the implementation.

The assessment of the activities of the Western Armenian National Assembly is one of the most important issues of our historiography. This issue was touched upon in Soviet historiography within the context of Armenian spiritual, social, political and cultural activities, but mainly with the tendency to underestimate the role and importance of that national institution in the history of our people.

The study and the analysis of the activities of the Western Armenian National Assembly have important historical and political significance in the formation of the national legislation of the Republic of Armenia, national ideology and administration.

The study is an important step to present to our nation the shadowed pages of its history. It aims to reveal the main directions and objectives of the activities of the Western Armenian National Assembly in the second half of the 19th century, to review and to deny all the wrong approaches, in our opinion, which considered the

activities of the National Assembly pointless and underestimated its role in the process of raising the national consciousness.
The national administrative situation of Western Armenians is not sufficiently studied. The Armenian scientists e.g. historians, philosophers, lawyers, politicians slightly spoke about the activities of Western Armenian National Assembly from the study point of view of Western Armenian socio-economic and political situation, national liberation movements or Armenian legal political thought history.
The National Constitution regulated the nation's cultural, religious and social affairs. It legally formulated the people and progressive intellectuals` struggle results in order to release the Armenian community and to ensure its intellectual and cultural development. In the same time, B. Dour has always sought to dilute the Western Armenian National Constitution by failing the activities of the constitutional institutions.
A range of laws adopted by the National Assembly to improve in particular the sphere of education and juridical system are of great interest, which can still be useful for the introduction of national values and upbringing.
It was practically impossible to apply in practice the majority of the laws adopted by the National Assembly, due to the political situation in Ottoman Empire in the second half of 19th century. Let us not forget the fact that the National Constitution was ratified as a constitution granted to people and it couldn`t have a higher legal force in the Ottoman Empire.